


ՀԱՄ. Կ. Կ. (Բ) 16-րդ ՀԱՄԱԳՈՒ-
ՄԱՐԻ ԲԱՆԱԶԵՎԸ ԿԵՆՏԿՈՄԻ
ՀԱԹՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

(ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄԻԱԶԱՅՆ)

ՊԵՏՏՐԱՏ ■ 1930 ■ ՅԵՐԵՎԱՆ



ՀԱՄ. Կ. Կ. (Բ) 16-ՐԴ ՀԱՄԱԳՈՒ-
ՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ ԿԵՆՏԿՈՄԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

(ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄԻԱԶԱՅՆ)



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1930



17736 A I 9134

Հրատ. № 1402
Գրատեպ. № 5786 (բ) Պատ. № 938 Տիբաժ 3000

Պետհրատի լիբրորդ տպարան, Յերևանում.

Համկոմկուսի 16-րդ համագումարն ամբողջովին և լիովին հավանություն և տալիս Համկոմկուսի Կ Կ-ի քաղաքական դժին և աշխատանքին:

Հաշվետու շրջանը բեկման շրջան էր, ինչպես կապիտալիստական յերկրներին, այնպես ել ԽՍՀՄ-ի համար նա նշանակում էր փոխանցում վերականգնման շրջանից վերակառուցման շրջանի, նշանակում էր սոցիալիստական շինարարության հսկայական ծավալումը: Կապիտալիստական յերկրներում բեկում տեղի ունեցավ դեպի տնտեսական անկումը:

Համագումարը գոհունակությամբ արձանագրում է, Վոր Համկոմկուսի Կենտկոմի լենինյան ճիշտ քաղաքականությունն ել ավելի ամրացրեց ԽՍՀՄ-ի միջազգային հզորությունը: Դրա շնորհիվ ձեռք բերվեցին հսկայական հաջողություններ յերկրի սոցիալիստ. ինքուստրացման գործում, ամրապնդվեց Միության ժողովուրդների յեղբայրական համագործակցությունը՝ լենինյան աղգային քաղաքականության հիմունքով, կատարվեց ու վերականգնվեց հնգամյակի առաջին յերկու տարվա ծրագիրը, միջակ մասսաները վճռական շրջադարձ կատարեցին դեպի սոցիալիզմ, Վորը հաշվարարություն տվեց կուսակցությանը՝ կուլակների, սահմանափակման և արտամղման լուղունդից անջնկու, նրա՝ վորպես ղասակարգ վերացման լուղունդին՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա:

I

Համագումարն արձանագրում է, Վոր հաշվետու շրջանի փաստերն ամբողջութեամբ ու լիովին հաստատեցին համաշխարհային դրութեան վերաբերյալ Կենտրոնի տված գնահատականը, մի դրութեան, Վոր բնորոշում է կապիտալիզմի մասնակի ստարիլիզացիայի հետագա և ուժեղ խախտումով, խմբերիալիստական սխտեմի բոլոր հակառությունների օրումով, նոր խմբերիալիստական պատերազմների վտանգի աճմամբ, բուրժուական-գեմսկրատական պետութեան ֆաշիզացիայով և նրանով, Վոր սոցիալ-գեմսկրատական բան-վոր դաժակարգի ճնշման ուղղակի դարձիքի յի վերած-վում:

Կապիտալիզմի չափազանց խորը ճգնաժամային վիճակի ամենացատուն արտահայտութեանը հանդիսացավ տնտեսական ճգնաժամը, Վորը վերաճեց համաշխարհային ճգնաժամի Բանալով աշխարհի վերաբաժանման համար մղվող ամենակատաղի պայքարի նոր շրջան, ուժեղացնելով կապիտալիստական նացիոնալիզացիան՝ ի հաշիվ բանվոր դատակարգի և սասակացնելով գաղութային յերկրների շահագործումը խմբերիալիստական ստրկատերերի կողմից, այդ ճգնաժամը միանգամայն ակնհայտորեն ջախջախում է սոցիալ-գեմսկրատական տեսութեանը «կազմակերպված կապիտալիզմի» մասին, Վոր յուրացրել են աջ ուղորտունիստները և նշանակում է կապիտալիզմի մասնակի կայունացման վախճանի մոտեցումը: Այդ ճգնաժամն ուժեղացնում է կապիտալիստական և գաղութային յերկրների հեղափոխական վերելքը և անխուսա-

փելիորեն վերաճելու յե մի շարք չերկրների քաղաքական ճգնաժամի:

Ջարգացող հեղափոխական փերելքը արտահայտվում է նրանով, լոք աճել և սրվել և տնտեսական գործադուլային պայքարը, վերաճել և քաղաքական պայքարի, նրանով, լոք կոմկուսները և հեղափոխական արհմիությունները հաջողութամբ կիրառում են գործադուլների ինքնուրույն ղեկավարման տակտիկան, գործադուլների լայն շարժում և ծավալվել կապիտալիստական մի շարք չերկրներում, հեղափոխական մի շարք յիւլթներ են կազմակերպվել զաղութներում, հեղափոխական պայքար և մղում Չինաստանի զուլաղութլուներ, կազմակերպվել և կարմիր բանակ Գոմինդանի բուրժուական հակահեղափոխութլան դեմ, աճել և հեղափոխական պայքարն իմպերիալիզմի դեմ Հնդկաստանում, Հնդկաչինում, Ինդոնեզիայում և Աֆրիկայում, ամրացել են Յւլրոպայի, Ամերիկայի ու Չինաստանի կոմկուսները ու մաքրվել են ոպորտունիստական նեխված տարրերից:

Համագումարը դոնուսակութլամբ նշում և Համկոմկուսի և նրա Կենտկոմի հսկայական դերը՝ Կոմինտերնի սեկցիաների բալլչեիկացման և նրանց ոպորտունիստական տարրերից մաքրելու գործում:

Իմպերիալիստական սիստեմի բոլոր հակասութլունների սրումը տեղի չե ունենում ԽՍՀՄ-ի և շրջապատող կապիտալիստական աշխարհի հակասութլունների սրման հետ միասին: Միջազգային բուրժուազիայի ասեկութլունը դեպի պրոլետարական գրկտատուրայի աշխարհիս միակ պետութլունը, և դեպի նրա հեղափոխականացնող ազդեցութլունը, արտա-

հայտնում և տնտեսական բյուրացայի վտրձերով, խորհրդային արտահանութեան դեմ մղվող պայքարով, կղերականների կամպանիայով, բուրժուական ու սոցիալ-դեմոկրատական մամուլի կատապլի պրպարով՝ կամպանիայով, ԽՍՀՄ-ի դեմ ուղղված պատերազմի ուժեղացող պատրաստումով:

Հակախորհրդային կամպանիայում հատուկ դեր և կատարում ֆաշիստացող սոցիալ-դեմոկրատիան, վերստովորարար հանդես և գալիս վսրպես առաջամարտիկ՝ ամենից ավելի սեռիցիոն և բուրժուական խմբակների հետ, ընդ վորում վսրպես սոցիալ-դեմոկրատիայի մոնետիկներ, ավելի ու ավելի բացահայտորեն հրապարակ են գալիս կոմունիզմի աջ և «ձախ» սենեկատները: Սակայն ԽՍՀՄ-ի հորաճուն տնտեսական դորութունն ավելացնելով ԽՍՀՄ-ի դեմ ուղղված ինտերվենցիայի սխիսն ու վստանգավորությունը բուրժուազիայի համար, մանավանդ ներկա ճշնաժամի պայմաններում, և զարգացող հեղափոխական վերելքի պայմաններում հակադրում և բուրժուազիայի սի-քանի խմբակներին դիմել ԽՍՀՄ-ի հետ տնտեսական կապերի զարգացմանը և ամրացմանը:

ԽՍՀՄ-ի միջազգային դորության ամրացումը արդյունք էր Համկոմկուսի ԿԿ-ի կիրառած արտաքին ճիշտ քաղաքականութեան: Միմիայն նրա քաղաքականութեան շնորհիվ խորհրդային կառավարությունը կարողացավ պահպանել տալ խաղաղությունը, վերհանդիսանում և սոցիալիստական հաղթական շինարարութեան զղալի ամրացման կարևորագույն պայմանը: Խորհրդային կառավարութեան հաստատուն քաղաքականութունը հնարավորութուն տվեց վերա-

կանգնելու գլխանագլխական հարաբերություններն Անգլիայի հետ, լիկվիդացիայի յենթարկելու Չին-Արևելյան յերկաթուղու կոնֆլիկտը, վոր փաթաթել երմեր վզին միջազգային իմպերիալիզմը:

Համագումարը հանձնարարում ե կենտկոմին՝ հետադադում ես վարել խաղաղության հաստատուն ե վճռական քաղաքականություն, իՍՏՄ-ի բանվորների, աշխատավոր մասսաների ե կապիտալիստական յերկրների ու գաղութների բանվորների ե աշխատավորների յեղբայրական կապի ե համերաշխության ամրացման հաստատուն ու վճռական քաղաքականություն:

Անհրաժեշտ համարելով իՍՏՄ-ի ե կապիտալիստական աշխարհի փոխադարձ տնտեսական հարաբերությունների հետագա զարգացումը, հիմք ունենալով արտաքին առևտրի մոնոպոլիայի անսասան պահպանումը ե կապիտալիստական առաջավոր յերկրների տեխնիկայի ամենալաչն ոգտագործումը՝ իՍՏՄ-ի ինդուստրացումն արագացնելու համար, համագումարն ընդգծում ե յերկրի սոցիալիստական ինդուստրալիզացիայի բալլեիկյան տեմպի մեծ նշանակությունը՝ ապահովելու համար իՍՏՄ-ի տնտեսական անկախությունը, պրոլետարական պետության պաշտպանունակությունն ամրացնելու համար, միջազգային իմպերիալիզմի ինտերվենցիայի ամեն տեսակ փորձերին հակահարված տալու համար:

Գոհունակությամբ նշելով, վոր մեր կարմիր Բանակը նորից ցույց տվեց իր ուժն ու մարտունակությունը, համագումարն ամենաչն վճռականությամբ մատնանշում ե, վոր անհրաժեշտ ե ել ավելի կենտրո-

նայնիկ կուսակցութեան ուշադրութեանը և մտքիկողացիա՛յի յենթարկել բանավոր դատաւարդի և զյուզացիութեան չքաւոր-միջակազին մասսաների բոլոր ուժերը, սմբաղնելու ԽՍՀՄ-ի պաշտպանութեան իշխանը, Կարմիր բանակի, ծովային ու սղաւին տորմիզների զուլութեանը և մարտունակութեանը:

II

Վ ԽՍՀՄ-ն հաշվետու շրջանում թեակոխեց սոցիալիստական շինարարութեան հսկայական ծավալման շրջանը: Կենտկոմի լենինյան ճիշտ քաղաքականութեանն աղահոմեց սոցիալիստական ինդուստրիայի հզոր թափը, առաջ բերեց բանվորական մասսաներում արտադրական խանդավառութեան հսկայական վերելքը, վարսնք հնարավորութեան ավին կուսակցութեանն առաջադրել 5-ամյակը 4 տարում իրականացնելու խնդիրը: Սոցիալիստական շինարարութեան ասպարիզում կուսակցութեան ձեռք բերած տեմպը հնարավորութեան և տալիս Խորհրդային Միութեանը պատմական ամենակարճ ժամանակամիջոցում հասնել և զերազանցել տեխնիկական-տնտեսական տեսակետից կապիտալիստական առաջավոր յերկրներին:

2 Ինդուստրացման արագ տեմպը բազա ստեղծեց զյուզատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման համար: Հացահատիկային խորտնտեսութեաններն արդեն այս տարի տալու յեն 100 միլիոն փթից ավելի աղբանքային հաց: Կուլանտեսական հնգամյակը զերակատարված և ընթացիկ տնտեսական տարում: Կուլտնտեսութեաններն արդեն այս տարի պետք և տան կես միլիարդ փթից ավելի աղբանքային հաց: Հակա-

3. Եւ զ ոպորտունիստներ խուճապային պնդումնե-
րին զյուզատնտեսութեան հետադիմութեան մասին,
կուսակցութեանը հիմք ունենալով սոցիալիստական
արդյունաբերութեան առաջավոր դերը, մանր հետա-
նաց ցիր ու ցան զյուզացիական տնտեսութեանների
միացումը կոլտնտեսութեաններում, անհատական չքա-
վոր և միջակ տնտեսութեաններին ցույց տրվող ոգ-
նութեանը, հիմնականում հաջող կերպով լուծեց հա-
ցահատիկային պրոբլեմը: Հացարույսերի ցանքսի տա-
րածութեանն այս տարի առաջին անգամ գերազան-
ցեց մինչպատերազմյան չափը: Զգալի չափով ավելաց-
րել և տեխնիկական զուգատնտեսական մշակույթնե-
րի ցանքսի տարածութեանը: Կուսակցութեանն ար-
դեն ձեռնամուխ և յեղել անասնաբուծութեան պրոբլե-
մի լուծմանը:

(Յերկրի սոցիալիստական ինդուստրացման հսկա-
յական տեմպին զուգակցված եր բանվոր դասակարգի
քանակական զգալի աճումը, նրա նյութական ու կուլ-
տուրական մակարդակի բարձրացումը, ռեալ աշխատա-
վարձի ավելանալը, 7-ժամյա բանվորական օրվա անց-
նելը, 5-օրյա անընդհատ աշխատանքի մտցվելը, գոր-
ծադրելութեան խիստ կրճատումը:

(Յերկրի տնտեսական շրջանացումը մինչև վերջ
հասցնելը զգալի չափով արագացնում և նախապես հե-
տափնաց շրջանների, ծայրերկրների և ազգային հա-
րապետութեանների ինդուստրացումը, ստեղծում և
աշխտեղ պրոլետարական նոր կենտրոններ, դուրսաց-
նում և արդյունաբերութեան և զյուզատնտեսութեան
ավելի ճիշտ և նպատակահարմար բաշխումը ԽՍՀՄ-ի
ամբողջ տերրիտորիայում:

Կուսակցութեանն այդ հաջողութեանը ձեռք և բերել, պայքարելով և հաղթահարելով սոցիալիստական շինարարութեան ճանապարհին ծառացած դժուարութեանները Այդ դժուարութեաններին, ի տարբերութեան կապիտալիստական յերկրներէց, հանդիսանում էին աճման և վոչ թե անկման դժուարութեաններ: Այդ դժուարութեանները բոլորում են նրանից, վոր մեզ տնհրաժեշտ և արմատապէս վերակառուցել արդեւորարարութեանը և դեւղատնտեսութեանը, փոխելով նրանց տեխնիկական բազան, գիներով նրանց ժամանակակից տեխնիկայով: Այդ խնդիրը առանձնապէս բարդ և դեւղատնտեսութեան նկատմամբ, վորտեղ տեխնիկական բազայի վերակառուցմանը միաժամանակ պետք և զուգակցի դեւղատնտեսութեան սոցիալիստական ստրուկտուրայի վերակառուցումը, մանր և մանրագուն, ցիր ու ցան տնտեսութեաններէ միացումը կոլտնտեսութեաններում և կապիտալիզմի արմատներէ վոչնչացումը: Արդեւորարարութեան և դեւղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման աշխատանքի բարդութեանն տվելի ուժեղանում և կուլակութեան, բուրժուական ինտելիգենցիայի և պետապարատի բյուրոկրատական տարրերի դաճադած դիմադրութեամբ (մնասարարութուն, սարսափ և այլն):

Այս դժուարութեանները հաջող կերպով և արագորեն հաղթահարելու հիմնական պայմաններն են հանդիսանում սոցիալիստական տեմպի արագացումը և ծավալուն արշավը կապիտալիստական տարրերի դեմ ամբողջ ֆրոնտով: Այդ տեմպի ամեն մի թուլացումն նրանց դեմ մղվող արշավի, ի հաճույս կապիտալիստական—կուլակային տարրերի, կնշանակէր դժուարու-

թյունները վոչ թե մեղմացում, այլ նրանց սաստկացումը, պրոլետարական դիկտատուրայի դասակարգային թշնամիների դիրքերի ուժեղացումը:

Այլ ուղորտունիստների կապիտուլյանտական աֆն դիրքավորումը թե՛ անհրաժեշտ է իջեցնել ինդուստրացման տեմպը, ըստ եյության թելադրանք է կուլակային կապիտալիստական խմբակների շահերի և հանդում է կապիտալիզմի վերականգնմանը: Կուսակցությունը և բանվոր դասակարգը ամենաանողոք դեմադրություն են ցույց տվել և ցույց կտան աջերի ուղորտունիստական կապիտուլյանտությանը, վոր իրականում նշանակում է դավաճանություն բանվոր դասակարգի շահերին:

Համադումարը հանձնարարում է Կենտկոմին ԽՍՀՄ-ի սոցիալիստական ինդուստրացման հետագա աշխատանքում կենտրոնացնել կուսակցության ջանքերը հետևյալ հիմնական խնդիրների իրականացման վրա.

1. Ամեն տեղ ծավալել ծանր արդյունաբերությունը, վորպես սոցիալիստական շինարարության հիմնական բազան (սե և գունավոր մետաղաձուլություն, վառելանյութ, մեքենաշինություն, քիմիա), մոտակա ժամանակաշրջանում ստեղծել ածխամետաղաձուլական նոր հզոր բազա՝ Ուրալ-Կուզբաս կոմբինատը:

2. Զարգացնել և վերակառուցել տրանսպորտը, մանավանդ յերկաթուղայինը և ջրայինը, վոր դառնում է սոցիալիստական տնտեսության ամենից ավելի նեղ տեղերից մեկը:

3. Զարկ տալ մասսայական սպառման մթերքներ

արտադրող արդյունաբերական ճյուղերի զարգացմանը, (թեթև ինդուստրիա), զարգացնել նաև համաքային բազան:

4. Ուժեղացնել արտահանումը, ուժեղ թափով ծախսելով արդյունաբերության և գյուղատնտեսության արտահանման համար աշխատող մի շարք ճյուղերը:

5. Անադայման կատարել տեղփոխումները, խրտիվ կատարել խեղճարժեքի իջեցման և արտադրանքի վորակի բարձրացման վերաբերյալ պլանային առաջադրանքները, ավելի վճարար և պլանաչափ կերտել ապրանքայութւմը, պոյքարել արտադրութւան մեջ բրակի և կորուտաների դեմ, բարձրացնել աշխտտանքի արտադրողականութւանը, վերացնել մի շարք ճյուղերում գոյութւան ունեցող ճեղքերը:

6. Ամեն կերպ զարգացնել գյուղատնտեսութւան մեքենայացումը և արակատրացումը, կատարել խորտնտեսական հնգամյակը յերեք տարում, մեքենատրակտորային հաստատուուն բազա ստեղծել ամբողջ Միութւան գյուղացիական տնտեսութւունների համատարած կոլլեկտիվացման համար:

7. Արագացնել սնտանորութւութւան զարգացման, վերականգնման, սնունդ արտադրող տեղյունաբերութւան ծախսման ձեռնարկումների արագ կերտումը՝ գյուղատնտեսութւան համապատասխան ճյուղերի բազայի վրա:

8. Իրականացնել ուտա աշխատավարձի ուրվագծված բարձրացումը, հայթայթող ցանցի աշխատանքի բարելավումը, մանավանդ սպառկոողի դծով:

Վճռական նշանակութւուն ունի տնտեսական-

տեխնիկական ղեկավար կադրերի պրոբլեմը, վորն առաջադրել և ամբողջ հասակով ԿԿ-ն և վորը դառնում և մեր սոց. շինարարության կենտրոնական պրոբլեմը: Միմիայն եւ ավելի մորիլիդացիայի յենթարկելով ամբողջ կուսակցության և բանվոր զասակարգի ուժերը՝ բանվոր զասակարգից կադրեր պատրաստելու խնդրի շուրջը, միմիայն վճռական ընկում կատարելով այդ ատպարիդում, հնարավոր և կիրառել հետազայում ևս սոցիալիստական ինդուստրիալի բայլէկէյան տեմպը:

III

Յերկրի սոցիալիստական ինդուստրիայի արագ տեմպը, վոր իրականացնում և կենտկումը 15-րդ համագումարի գիրեկտիվների հիման վրա, խոր փոփոխութլուններ և մտցնում յերկրի զասակարգային հարաբերութլունների մեջ: Այդ փոփոխութլունները բնորոշվում են նախ և առաջ՝ բանվոր զասակարգի թվի արագ աճման հետ միասին, չքավոր գյուղացիութլան վերաբերմամբ, նրա ղեկավար դերի ուժեղացումով: Բանվոր զասակարգի տնտեսական կապը գյուղացիական հիմնական մասսաների հետ, ստացավ առավելապես արտադրական ընուլթ: Կուսակցության և նրա կենտկումի քաղաքականութլունն ապահովեց գյուղացիական հետամնաց ցլր ու ցան, մանր տնտեսութլունների փոխադրումը սոցիալիստական խոշոր հողագործութլան ռելսների վրա, ապահովեց համատարած կոլլեկտիվացման ծավալումը և կուլակի, վորպես զասակարգի, վերացման լողունդի գործնական իրականացման անցները: Հաշվետու շրջանում Հափազանց նվազեց մասնավոր կապիտալի դերը. նա եւ ավելի յետ և

մղվում: Վճարար ուժեղանում և Խորհրդային պետու-
թյան պլանային կարգավոր դերը յերկրի ամբողջ ժո-
ղովրդական տնտեսության մեջ, ավելի ու ավելի ընդ-
գրկելով մոչ միայն արդյունաբերությունն, այլև գյու-
ղատնտեսությունը: Իրականացվում և Լենինի առա-
ջադրած խնդիրն, այն է՝ «նեղական Ռուսաստանը»
դարձնել «սոցիալիստական Ռուսաստան»:

Սոցիալիստական շինարարության աճումը կա-
պիտալիստական տարրերի վրա կառավարող արշավի
ուժեղանալն անխուսափելիորեն սրում և յերկրում կու-
լակային-կապիտալիստական տարրերի դասակարգա-
յին պայքարը և նրանց կառավարի գլխավորության փո-
ճերը: Հենվելով գյուղի բատրակային-չքավոր մասնա-
ների հարածուն ակտիվության վրա, ամբացնելով դա-
շինքը միջակի հեռ՝ կուսակցությունն ընկճեց հակա-
հեղափոխական սարսուռը և կուլակության գլխա-
գրությունը, հաջող կերպով կիրառեց հացամթերում-
ները և կուսակեց հացի խոշոր պահեստի ֆոնդ: Մի-
ջակ մասսաների վճռական շրջադարձը գեպի սոցիա-
լիզմը, վոր հետևանք և կուսակցության ճիշտ քաղա-
քականության, ամենից ավելի փայլուն արտահայտ-
վեց կոլտնտեսական շինարարական շարժման մեջ, վոր
1929 թվականի վերջերին ընդգրկեց միլիոնավոր գյու-
ղացիական տնտեսություններ, ստեղծելով յերկրում
դասակարգային ուժերի նոր հարաբերություն, դարձ-
նելով կոլտնտեսության մեջ մտած միջակին խորհրդա-
յին իշխանության հենարանը, պայմաններ ստեղծելով
հացի կուլակային արտադրությունը փոխարինելու
խորտնտեսությունների և կոլտնտեսությունների ար-
տադրությամբ և հնարավորություն տալով կուսակ-

ցուլթյանը կուլակուլթյան դուրս մղումից անցնելու կուլակուլթյան, վորպես դասակարգի, վերացման լոզունգին՝ համատարած կուլեկտիվացման հիման վրա:

Համագումարն ընդգծում և ալդ լոզունգի պատմական մեծագույն կարևորությունը, վոր նշանակում և բանվոր դասակարգի գրոհը յերկրի կապիտալիստական շահագործման վերջին հենարանի վրա:

Համագումարը միանգամայն ճիշտ և համարում կենտկոմի: հունվարի 5-ի դիրեկտիվները կուլեկտիվացման տեմպի և նրա հետ կապված այն ձեռնարկումները մասին, վորոնք վերաբերում են կուլակուլթյան, վորպես դասակարգի, վերացմանը ԽՍՀՄ-ի տարրեր շրջաններում և մարզերում՝ միջակի հետ կնքած ամուր դաշինքի հիման վրա: Սակայն համագումարն արձանագրում և, վոր մի շարք մարզային ու տեղական կազմակերպություններ, կոպիտ կերպով խախտել են կենտկոմի դիրեկտիվները (16-բդ կուսկոնֆերենցիայի վորոշումները, նույնիսկ նրան պլենումի և հունվարի 5-ի դիրեկտիվները, Ստալինի «Մեծ բեկման տարին» հոդվածը), նպատակ դնելով կուլեկտիվացնել իրենց մարզերը 1930 թվականի գարնան կամ պանիայի ընթացքում (մինչդեռ կենտկոմի վորոշման մեջ ասված էր 2—3 և ավելի տարիների մասին): Այդ դիրքն առանձնապես անթույլատրելի և վնասակար էր սպառող շրջանների և ազգային հետամնաց հանրապետությունների նկատմամբ:

Այդ սխալ դիրքավորումն անխուսափելիորեն պետք և հանգեցրեց այն բանին, վոր դեպի միջակը ցուցաբերող լենինյան քաղաքականությունը սկսեց փոխարինվել վարչական հարկադրման քաղաքականությամբ, վոր ամբողջովին թշնամի չէր լենինիզմին:

(3)
 (Կենտկոմի մի շարք վարչականների և բնի. Ստա-
 լինի հոգիածների ժամանակին արված հաստատուն
 վճռական ցուցումները կանգնեցրին չափազանցումնե-
 րի ալիքը և հարկադրեցին չափը խզիչներին վերա-
 դառնալ լենինիզմի դիրքերը:

Համապատասխան վճռարար նշում և աջ ուղևորա-
 ների և «ձախ» խոտորվողների դրադարախճ այն հայ-
 տարարութունները, թե հակամիջակային չափազան-
 ցումների ուղղվումը նշանակում էր կուսակցության
 նահանջն իր հիմնական գծից:

Համապատասխան ամբողջովին հավանություն և ստա-
 լիտ Կենտկոմի վարչամանր կուսնառնություններին
 տրվող արտոնությունների մասին, վերոնք զգալի չա-
 փով նպաստեցին կուսնառնությունների ամբաջմանը,
 ցանքսի կամպանիայի ամբողջ կիրառմանը, վերաիզ
 կուսնառնական հասվածը վճռական դեր կատարեց:

Կուսակցությունը պետք և շարունակի անողոք
 պայքար ընդդեմ հակամիջակային խոտորումների, վո-
 բոնք ներկայումս ավելի քան լերբեկցե ձեռնտու յեն
 կուլակին և աջ ուղորտունիզմին:

Կուլեկտիվացման դեմ վճռարար հանդես յեկող
 աջ ուղորտունիստները փորձ արին ոգտագործել կու-
 տնատեսական շարժման դժվարությունները և հակամի-
 ջակային խոտորումները, վորպեսդի նոր դրոն սկսեն
 Կենտրոնական Կոմիտեյի և նրա քաղաքականության
 դեմ: Վերջին ժամանակներս նկատվել են սնանկացած
 աջ ուղորտունիստների մի շարք յիւլեյթներ, վորոն-
 ցով նրանք փորձ եյին անում վարկաբեկել կուսակ-
 ցության ամբողջ աշխատանքը կուլեկտիվացման գոր-
 ծում և սրա հետ կապված կուլակի վերացման ձեռ-

նարկումները: Նրանք քարոզում եյին ինքնահոսի թեո-
րիան կոլտնտեսական շարժման մեջ և լիկվիդատորա-
կան վերաբերմունք եյին ցույց տալիս դեպի կուսակ-
ցութեան հիմնական լուրջագները սոցիալիստական շի-
նարադութեան տվյալ ետապում, դեպի համատարած
կոլլեկտիվացման և կուլակութեան, վորպես դասակարգ
վերացման լուրջագ:

Կուսակցութեանը ջախջախեց աջ ոպպորտյու-
նիստներին և ձեռք բերեց մեծագուշն հաջողություն-
ներ կոլտնտեսական շարժման մեջ: Կուսակցութեանն
այսուհետե ել ջախջախիչ հարվածներ կհասցնի աջ
ոպորտունիստների բոլոր այն փորձերին, վորոնց
նպատակը կլինի վիժեցնել կոլեկտիվացման գործը և
այդ նպատակով ոգտագործել կոլտնտեսական շինա-
րարութեան գժվարությունները:

Կուսակցութեան աշխատանքի մեջ ներկա մոմեն-
տում վճռական նշանակություն ե ստանում չքավորա-
կան և միջակ տնտեսությունների հետագա ներգրա-
վումը կոլտնտեսությունների մեջ՝ կամավոր հիմունք-
ներով, կոլտնտեսություններում աշխատանքը կազմա-
կերպելու պրորիումը, բերքի բաշխումը կոլտնտեսու-
թյունների ներսում, կոլտնտեսական կադրերի պատ-
բառուման, կոլտնտեսական մասսաների կուլտուրական
մակարդակի բարձրացման, մանր-բուրժուական տա-
տանումները կոլտնտեսությունների ներսում հաղթա-
հարելու, կոլտնտեսությունները վորպես սոցիալիստա-
կան շինարարութեան հենակետեր գյուղում՝ ամին
կերպ ամրացնելու պրորիումը:

Կուսակցութեանը գլխավի իր ամբողջ գործնա-
նական աշխատանքում կիրառելով «կոլտնտեսականը

մեր հենարանն է» լողունդը, տեղը և վճարար պայ-
քար մղի անհատական չքավոր-միջակային անտեսու-
թյան անտեսման կամ թերազնահատման ամեն տեսակ
տենդենցների դեմ, ողնութուն ցույց տալով այդ տըն-
տեսությանը, ամբայնելով չքավորների ինքնուրույն
կազմակերպումը խորհուրդներում, կռուրաքիտյում և
կոլանտեսական շարժման ստորին ողակներում, աշխա-
տանք կատարելով անհատական անտեսություններում,
ներգրավելով նրանց կոլանտեսությունների մեջ:

IV

Կուսակցության հսկայական հաջողությունները,
արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ սո-
ցիալիստական շինարարության ասպարեղում՝ հնարա-
վոր դարձան միմիայն բանվոր դասակարգի և նրա հե-
տեից գնացող աշխատավոր մասսանների հսկայական
ակտիվության բազալի վրա, վորն արտահայտվեց նը-
բանով, վոր լաչն դարգացավ մրցումը, սկսվեց պրոլետ-
գիկատտուրաչի՝ կուսակցության, արհմիութենական և
խորհրդային, կոոպերատիվ կազմակերպությունների
բոլոր որդանների աշխատանքի վերակառուցումը, հաշ-
տարարվեց մասսանների մորիլիդացիա՝ բայլչեիկյան
տեմպի համար, հաղթահարվեցին դժվարությունները,
արհմիություններն իրենց յերեսը դարձրին դեպի ար-
տադրությունը, դեպի խորհուրդներն ու կոլանտեսա-
կան շինարարությունը:

Կուսակցությունն իրականացնելով արհմիու-
թյունների աշխատանքի վերակառուցումը, հանդիպեց
ՀԱՄԿԿ-ի նախկին ղեկավարության դիմադրությանը,
վորը պրոֆապարատում պատվաստում էր ասպաքա-

դաքայնության, կուսակցությունից և սոցիալիստական տնտեսութան շինարարությունից կտրվելու ուղորտունիստական, արեղչունիոնիստական տրամադրությունները, փորձելով արհեստակցական շարժման մեջ աջ ուղորտունիստական տարրերի համար ստեղծել մի հենակետ՝ աչն պայքարում, վոր մղում են նրանք կուսակցության և նրա կենտկոմի հիմնական դժի դեմ:

Համագումարն ամբողջովին և լիովին հավանություն ե տալիս կենտկոմի աչն միջոցներին՝ վորոնք կիրառված են արհշարժման մեջ լենինյան-բայլշևիկյան ղեկավարությունն ամբացնելու համար: Կուսակցության և ՀԱՄԿՍ-ի առաջ խնդիր ե զրված շարունակել և իր վախճանին հասցնել արհմիությունների շրջադարձը դեպի արտադրությունը, դեպի ակտիվ մասնակցությունը սոցիալիստական տնտեսության շինարարությանը, հաղթահարել մանր-բուրժուական տատանումները—բանվոր դասակարգի հետամնաց խավերում, ամենասերտ կերպով զուգակցելու աչդ ամբողջ աշխատանքին բանվորների մթերավորումը բարելավելուն, աշխատանքի պաշտպանության, պետական, տնտեսական և արհմիութենական ապալարատի բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարի ուժեղացումը:

Կուսակցության և արհմիությունների կարևորագույն խնդիրն ե՝ ավելի բարձր աստիճանի վրա դնել ձեռնարկություններում սոցմրցման և հարվածայնության շարժումը, աչդ շարժումն իսկապես դարձնել բանվորական մասսաների դասակարգային դաստիարակության դպրոց, բարելավել նրա ղեկավարությունը, ամենակարճ ժամանակում գլխովին սոցմրցման և հարվածայնության գրավել ձեռնարկություններում աշ-

խառաղ կոմմունիստներին ու կոմյեքստականներին, բարձրացնել կոմմունիստների արտադրական վորակավորումը, կուսակցութեան ու արհմիութենական աշխատանքի ծանրութեան կենտրոնն իրոք վախազրել ցեխերը, բրիգադները:

15-րդ համագումարը միանգամայն ճիշտ կերպով, վորպէս վերակառուցման շրջանի կարևորագուէն պրոբլեմ, առաջադրել էր կուլտուրական հեղափոխութեան պրոբլեմը: Սակայն չերկրում կուլտուրական շինարարութեան ծավալման տեմպը զեռ բոլորովին անբավարար է: Համագումարն ուշադրութեւն է հրավիրում նրա ուժեղացման անհրաժեշտութեան վրա: Ընդհանուապարտադիր տարրական կրթութեան կենսապորժումը, անդրապիտութեան վերացումը պետք է հանդիսանա կուսակցութեան մարտական խնդիրը մոտակա շրջանում: Կուսակցութեւնը պետք է ամբացնի և զարգացնի ալէն զգալի հաջողութեւնները, վորոնք ձեռք են բերվել մասսաներին կրօնի ռեակցիոն ազդեցութեւնից ազատազրելու գործում: Նշելով մամուլի զգալի աճումը, նրա վորակական բարելավումը, վորպէս մասսաների մօրիլիզացիայի մի զենք՝ սոցիալիստական շինարարութեան ասպարիզում, համագումարը հանձնարարում է կենտկոմին միջոցներ ձեռք առնել ել ալիքի բարելավելու մամուլը, բարձրացնելու նրա զերը սոցիալիստական արշավի ծավալման ասպարիզում:

Դասակարգային պայքարի սրվելը չերկրում չերկարող հակառակակողմնական հակախորհրդային տարրերին: Համագումարը հաւանութեւն է տալիս ալէն ձեռնարկումներին, վոր կիրառել են կենտկոմը և ԿՎՀ-ն պետապարտը զտելու և բարելավելու հա-

մար, անհրաժեշտ համարելով ուժեղացնել պայխան ամեն ճեսակի բյուրակրաւիզմի դեմ, հիմք ընդունելով ինքնաքննադատութեան հետադա կիրառումը, առաջ քաշված բանվորների ավելի լայն ներգրավումը, հիմք ունենալով կադրերի ավելի ծավալուն պատրաստումը պրոլետարական գիտատուբայի որդանների համար, պետութեան կառավարման մեջ բանվորների մասնաշաղկան ներգրավման նոր ձևերի զարգացումը (խորհուրդների աշխատանքի եւ ավելի բարելավումը և այլն):

Համագումարը զոհունակութեամբ նշում և կուսակցութեան հաղահալան յեւ վորակական հետադա աւանումը, նրա սոցիալական կադմի զգալի բարելավումը, արտադրական բանվորների ուժեղ ներհասումը կուսակցութեան մեջ (ամբողջ ցեխերի և գործաւանների շարժումը դեպի կուսակցութեունը), կուսակցական կադրերի, կուսակցական լայն մասնաւորի զադափարական մակարդակի բարձրացումը, կուսաշխատանքի վորակի բարձրացումը՝ ներկուսակցական գեմոկրատիայի և ավելի ամրացումը, պրոլետարական ինքնաքննադատութեան հաջող ծավալումը՝ կուսակցութեան բոլոր ողակներում, խորթ, քայքայված, ներս սղոսկած տարրերից կուսակցութեունը մաքրելու աշխատանքի հաջող կիրառումը:

Սակայն կուսակցական կադրերի զգալի մասի զադափարական և քաղաքական մակարդակը դեռ բավարար չեւ, վորը հաստատեցին հակամիջակային խոտորումների բադմաթիւ վաստեր: (կուսակցութեան կադրերի, մանավանդ գյուղի կուսակադրերի պատրաստման և ամրացման խնդիրը առանձնապես սուր կերպով

զբլած և զլուղում: Կազմակերպություններում և ձեռնարկություններում կուսակցության աճումը բանվորներով մինչև այժմ ել զեռ անբավարար և: Անհրաժեշտ և ուժեղացնել բանվորներին կուսակցության մեջ ներգրավելու աշխատանքը, մանավանդ խոշոր ձեռնարկություններում:

Փնայած կանանց և յերկատասարդության աճող դերն արտադրության մեջ, մինչև այժմ ել բավարար ուշադրություն չի նվիրվում նրանց աշխատանքին: Թույլ և կանանց մեջ կատարվող աշխատանքը զլուղում, վոր ակնհայտորեն յերևան յեկավ կոլեկտիվացումը կիրառելիս Համագումարը պարտավորեցնում և կուսակցության, արհմիութենական, խորհրդային և այլ կազմակերպություններին՝ ուժեղացնել իրենց աշխատանքը՝ աշխատավորների լայն մասսաներին և կանանց մոբիլիզացիայի յենթարկելու աստարիզում, մանավանդ զյուզում, ուժեղացնել սոցիալիստական շինարարության ծավալումը: Համագումարը, արձանագրելով այն նվաճումները, վոր ձեռք և բերել Կոմյուրիստիությունը սոցիալիստական մրցության և հարվածաչնության ծավալման բնագավառում, գտնում և, վոր յերկատասարդության, կոմյուրիստական ու պրոնիւրական կազմակերպությունների հետագա մեծացող նշանակությունը պահանջում և ավելի մեծ ուշադրություն և սգնություն կուսակցական կազմակերպություններից: Խնքնաքննադատությունը, վորպես կուսաշխատանքի ասորյա որդանական մեթոդ, բավականաչափ չի ծավալված բոլոր կազմակերպություններում: Դեռ նկատվում են խնքնաքննադատության սահմանավակման և խեղաթյուրման փաստեր: Պետք և

վճռական պայքար մղել նման փաստերի դեմ, լայն ծավալելով բայլելիկյան խնդնաքննադատութիւնը, բարձրացնելով կուսակցական կադրերի և կուսակցական մասսաների գաղափարական մակարդակը և բայլշիկյան դատաւարակութիւնը, մերկացնելով կուսակցական դժի խեղաթյուրումները, ոպորտունիզմը գործնականում և ել ավելի դարգացնելով ներկուսակցական գեմոկրատիան:

Գյուղի սոցիալիստական վերակառուցման լայն ծավալվող պրոցեսն առանձնապէս սուր կերպով առաջադրում և գյուղի կուսակցական կազմակերպութեան ամրացման խնդիրը: Այդ կազմակերպութեան քանակական ու փորակական ամրացումը, կուսակցական ու ժեղ բջիջների կազմակերպումն խորհրտանսութիւններում ու կոլտնտեսութիւններում, խորտնտեսութիւնները և կոլտնտեսութիւնները կուսաշխատանքների հենակետեր դարձնելը գյուղում, գյուղատնտեսական բանվորների, բատրակների, լավագույն կոլտնտեսականների ներգրավումը կուսակցութեան մեջ, կոլտնտեսութիւններում չքավորների, կանանց և յերիտասարդութեան մեջ կատարվող աշխատանքը պատշաճ բարձրութեան վրա դնելը հանդիսանում են անհրաժեշտ նախադրյալ գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման անպարելզում կուսակցութեան աշխատանքի հաջողութեան համար:

Համագումարն ամբողջովին և լիովին հավանութիւն և տալիս նենտեւոմի աշն վորւշմանը, վորով վերացվում և դավաոր և ամրացվելու յե շրջանը, վորպէս գյուղի սոցիալիստական շինարարութեան հիմնական ողակը, վորը պետք և վճաբար մոտեցնի կու-

տակցական, խորհրդային ապարարտար գյուղին, կու-
տնականություններին և մաստաներին: Այդ ձևոնար-
կումը բացառիկ կարևոր նշանակություն ունի գյուղի
կուտակցական կազմակերպությունն ամրացնելու հա-
մար, ինչպես և Կենսական ու մարդի կապը տեղերի
հետ բարելավելու և պարզացնելու համար: Համապու-
մարը հանձնարարում և Կենսական կերտակ գործնա-
կան աչք միջոցները, վարձք կապում են գաղափարի
վերացման և շրջանների ու մարդերի ամրացման հետ:

V

Կուտակցությունը սոցիալիստական շինարարու-
թյան ատարիցում ձևաբ բերեց մեծագույն հաջողու-
թյուններ, շնորհիվ կուտակցության հիմնական գծի
հաստատուն կերտման, շնորհիվ անողորք և վճռական
պայքարի յերկու ճակատում, թե տրոցկիզմի և թե
նրան ցուցարկելու հաշտվողականության և թե աջ
թեքման՝ ավյալ ետագում գլխավոր: Միայն յերկու
ֆրոնտում պայքարելու միջոցով հնարավոր յեղավ լի-
վին մերկացնել տրոցկիզմը, վորն անցել և հակահեղա-
փոխական, մենշևիկյան դերքեր: Սակայն կուտակցու-
թյան մեջ գետ շարունակվում են գոյություն պահա-
նել հաշտվողական տրամադրությունները զեպի տրոց-
կիզմը, վոր նախ և առաջ արտահայտվում և բանվոր
դասակարգի և միջակ գյուղացիության դաշինքի թե-
րաֆնահատությամբ: Կուտակցությունը հետադաշում
ևս ամենավճռական պայքար կմղի այդ տրամադրու-
թյուններին դեմ:

Ջախջախելով տրոցկիզմը, կուտակցությունը ընդ-
հարկեց ուղարտունիզմի նոր արտահայտությանը՝

իդեմն աջ թեքման (Բուխարինի խմբակը): Աջ թեքումը կուսակցութեան հիմնական դժին հակադրեց իր բացահայտ-սպորտունիստական դիժը: Աջերի դիժը հանդուս և կապիտալիստացեացի՝ չեղիլի կուլակային և կապիտալիստական տարրերի տուջև: Կուլակու-թեան որչեկարիվ դործակալութեանը հանդիսացող աջ ուկլոնիստների դժի իրականացումը կնշանակեր վեժեցնել սոցիալիզմի կառուցումը և վերականգնել կապիտալիզմը մեր չեղիլում: Կապիտալիստական տարրերի վրա ամբողջ Ֆրոնտում ծավալվող արշավի շըրջանում աջ թեքումը եր և կմնա կուսակցութեան գլխավոր վտանգը:

Համագումարն ամբողջովին և լիովին հավանութեան և տալիս արոցկիլումի և աջ թեքման դեմ պայքարելու ասպարիզում կուսակցութեան Կենտկոմի կերպած ձեռնարկումներին, վորոնք ապահովում են կուսակցութեան միասնութեան իրական պահպանումը, հիմնական դժի կերպումը և կուսակցութեան միաձուլումը թնինիզմի հիման վրա:

Համագումարն ամբողջ կուսակցութեան ուշադրութեանն և հրավիրում այն հանգամանքի վրա, վոր ամեն դուշնի սպորտունիստներ, մանավանդ աջերը, դործադրում են նոր մաներ, այն է՝ ձեռկանորեն խոտտովանում են իրենց սխալները, ձեռկանորեն համամաձայնութեան են հայտնում կուսակցութեան հիմնական դժին, չհաստատելով իրենց խոտտովանութեանն աշխատանքով ու հիմնական դժի համար մղած պայքարով, վոր իրականում նշանակում և միայն կուսակցութեան դեմ մղվող բացահայտ պայքարից անցնել սքողված պայքարի կամ սպասել ավելի նպաստավոր

մամենտի՝ կուսակցութեան դեմ դրոշը վերսկսելու համար: Կուսակցութեանը պետք է ամենաանաղաք պատերազմը հաջադարձի աչգ տեսակ չերկերեսութեան և խտրելաշուքութեան դեմ, պահանջելով, Վոր իրենց սխալները խտրատվանալները ակախով կերպով պաշտպանեն կուսակցութեան հիմնական գիծը և ապացույցին իրենց խտրատվանութեան անկեղծութեանը: Այդ պահանջը չկատարելու դեպքում պետք է ձեռք առնել կազմակերպչական ամենաովճուհական միջոցներ: Համապումարը, հաշտարարում և, Վոր աջ ուղարկելիայի հաշտեքները անհամադրելի լին Համկոմկուսին պատականելու հետ:

Համապումարը նշում է, Վոր չերկրում դատական-դային պայքարը սրվելու պատճառով, կուսակցութեան շարքերում ակտիվացել են ազգային բեմումներ՝ գեղի մեծապետական և տեղական շովինիզմը:

Տվյալ ետապում գլխավոր վտանգն և հանդիսանում է մեծապետական թեքումը, Վորը վորձում է բեմի-գլխի յենթարկել ազգային քաղաքականութեան լինինյան հիմունքները և ինտերնացիոնալիզմի դրոշակի տակ, Վոր սքողում էր առաջ տիրապետող վելիկո-ուսական ազդի մեռնող դատականը ձգտումները, վերադարձնել իրենց կորցրած արտոնութեանները: Դրա հետ միասին, ակտիվանում է տեղական նացիոնալիզմի թեքումը, Վոր թուլացնում է ԽՍՀՄ-ի ժողովուրդների միասնութեանը և ոժանդակում է ինտերվենցիալին: Կուսակցութեանը պետք է ավելի ուժեղ պայքար մղի ազգային հարցում յերեան յեկող այդ յերկու թեքումների և նրանց հանդեպ ցուցաբերվող հաշտվողականութեան դեմ, միաժամանակ ավելի մեծ ուշադրութեան նվիրելով լինինյան ազգային քաղաքականու-

թիւն գործնական կիրառմանը, ազգային անհավասարութեան տարբերի վերացմանը և Խորհրդային Միութեան ժողովուրդների ազգային կուլուրաքաների լայն ծավալմանը:

16-րդ համագումարը գտնում է, վոր մեր կուսակցութեան Կենտկոմը համախմբելով լենինյանների շարքերը պատմական նոր կռիւներէ համար, առաջիկայում եւ անողոր հակահարված պետք է տա կուսակցութեան պողպատե զիւցիպլինը, լենինյան կուսակցութեան միասնութիւնը բուլացնելու յնվ խալսելու բոլոր փորձերին:

16-րդ համագումարը հանձնարարում է կուսակցութեան Կենտկոմին հետագայում ապահովել սոցիալիստական շինարարութեան մարտական բայլելիկիւն տնայր. միջոցներ ձեռք առնել ճնգամյակը չորս տարւում իրոք կատարելու համար, աճողոքաբար կիրառել կուսակութեան, վորպէս դասակարգի, վերացումն ամբողջ Միւսթեան մեջ՝ համատարած կոլեկտիւացման հիման վրա:

Համագումարը անհողդողդ համոզում է հայտնում, վոր համախմբելով լենինիզմի դրոշի տակ միլիոնավոր բանվորներին և կուտնտեսականներին, ընկճելով դասակարգային թշնամիների դիմադրութեանը, Համկոմ-կուսը սոցիալիստական ծավալումն առաւի կտանի մասսաներին և կապահովի սոցիալիզմի լիակատար հաղթանակը ԽՍՀՄ-ում:

Համագումարն անհողդողդ համոզում է հայտնում, վոր բարձրացնելով ԽՍՀՄ-ի հզօրութեանը և ամբացնելով չեղարայրութեան կապերը կապիտալիստական և դադութեան յերկրների բանվորների ու աշխատավորների հետ, Համկոմկուսը կապահովի Խորհրդային Միութեան


իշան ամբաստան, ժողովու միջադպարին պրտեաարա-
կան հեղափոխութեան անխառնակի հեռարանի:

Կեցցե՛ սոցիալիստական հաղթանակը ԽՍՀՄ-ում,

Կեցցե՛ նամաւխառնային պրոլետարական նեղափո-
խարքան հաղթանակը:







ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0046404

(104.)

ԳԻՆԸ 10 ԿՈՊ. ՄԱՍ. (1 մամուլ)

A 3134

619



**Резолюция XVI Съезда ВКП(б)
по отчету ЦКВКП(б)
(Принято единогласно)**

Госиздат ССР Армении
Эривань — 1930